ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02 օգոստոսի 2011 թվականի N 98-Ա

ք. Հրազդան

Ձ. ԱՍԱՏՈՒՐՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Ջուլիետա Ասատուրովային*** 2011 թվականի օգոստոսի 2-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2005 թվականի հունիսի 22-ին կնքված N 21 աշխատանքային պայմանագիրը, կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել նրա վրա՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կողմից զբաղեցնելը:

2. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ